**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«13» մայիսի 2024թ. N ՄՈ/214-Ա

ք. Արմավիր

## «ՋՐԱՌԱՏԻ ԹԱԹՈՒԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵԼԱՆՅԱ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մելանյա Համբարյանի 2024 թվականի մայիսի 10-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելանյա Համբարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի մայիսի 27-ից 31-ը ներառյալ՝ 4 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Մելանյա Համբարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ժիրայր Վարդանյանին:
3. «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ժիրայր Վարդանյանի վարձատրությունը 2024 թվականի մայիսի 27-ից 31-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մելանյա Համբարյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվական հունիսի 3-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-05-13 14:47:32 GMT

**ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**